«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Աշակերտի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Խաչատրյան Ազգանուշ
ՄԱՐԶ	Արմավիր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Թաիրովի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3
Հետազոտական աշխատանքի նպատակը 4
Աշակերտների ինքնուրույնության մակարդակները 6

Հետազոտության ընթացքը 9

Տվյալների մշակում և վերլուծություն 14

Ամփոփում 18
Գրականության ցանկ 19

Ներածություն

Այսօրվա մեր հասարակական կյանքի զարգացման փոփոխություններն ընթանում են ժամ առ ժամ: Բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, այդ թվում նաև կրթական համակարգում: Եվ անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն: Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է:

Ինքնուրույնությունը, սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է:

Երեխայի ինքնուրույն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում: Ուսուցման գործընթացում, թերևս կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել աշխատել ինքնուրույն: Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար: Այն դրսևորվում է դասից դաս, դասարանից դասարան: **Ինքնուրույն աշխատանքը** դիտարկվում է որպես ուսուցման միջոց՝ նպաստելով ինքնուրույության ձևավորմանը:

Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է տալ այդ հնարավորությունը: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն արդեն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

Հետազոտական աշխատանքի նպատակը

Ինչպես ասել է ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա, մանկավարժ, կոմպոզիտոր Ժան-Ժակ Ռուսոն՝ «Մեզանից ոչ մեկն այնքան մեծ փիլիսոփա չէ, որ իրեն կարողանա երեխայի տեղը դնել»:

Ես միշտ սիրում եմ կրկնել, որ հաջողակ ուսումը, ուսուցումը սկսվում է հենց ինձանով, իմ զբաղվածությամբ, իմ ներգրավվածությամբ, իմ գործունեությամբ և նախաձեռնությամբ: Հավատարիմ մնալով «Ես անհատ եմ, ինչ որ մեկն եմ և կարող եմ ինչ-որ բան անել»կարգախոսին՝ իմ առաջին և գլխավոր մտահոգությունն այն է, որ յուրաքանչյուր երեխա ողջունվի մեր դպրոցում, իրեն հարմարավետ զգա և ընդունվի այնպիսին,ինչպիսին որ ինքը կա: Այդ իսկ պատճառով մենք ողջունում ենք և գնահատում յուրաքանչյուր երեխայի՝ իր թույլ և ուժեղ կողմերով: Հենց այդ անհատների կողմից կամ միջոցով առաջացած բազմազանությունն է ձևավորում է մեր մանկավարժական աշխատանքի հիմքը և դասերի հայեցակարգը: Ես ավելին քան համոզված եմ, որ յուրաքանչյուր երեխա ցանկանում է սովորել, եթե նրան տրվում է բավականաչափ ժամանակ սովորելու համար և եթե առաջադրանքներն համապատասխանում են իր կարողություններին: Իմ ամենօրյա աշխատանքի նպատակն է երեխաներին նախապատրաստել ինքնուրույն լինել կյանքում,փորձել (իհարկե, տվյալ տարիքը հաշվի առնելով) պատասխանատու լինել և փորձել ինքնուրույն որոշումներ կայացնել որոշակի հանգամանքներում և պայմաններում: Չվախենալ սեփական կարծիքը հայտնել, և կարևոր չէ՝ պատասխանը ճիշտ է, թե՝ սխալ: Այսկերպ ես ցանկանում եմ և փորձում եմ նպաստել ոչ միայն երեխաների ուսման զարգացմանը, այլ նաև նրանց՝ որպես անձ, անհատ ձևավորվելուն: Լինելով տարրական դասարանների ուսուցչուհի՝ սեփական փորձից ելնելով, կարող եմ ասել, որ տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն աշխատանքի ընթացքում երեխան պարզ պատկերացնում է աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և փորձում է առանց ուսուցչի միջամտության «լուծել իր առջև դրված խնդիրը»: Իսկ այդ Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Եթե ինքնուրույն աշխատանքը ճիշտ և համակարգված է կազմակերպված, ուրեմն կարելի է համոզված

լինել, որ երեխաները ճկուն և խորը կյուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, ձեռք կբերեն նորը ճանաչելու ցանկություն և կզարգացնեն այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար:

Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն ունի որոշակի առանձնահատկություններ: Նույնիսկ փորձառու ուսուցիչների մի մասը երբեմն չի մտահոգվում սովորողների ուսումնական գործունեության ակտիվացման հարցով: Նմանուսուցիչներ ունեցող աշակերտը կարող է օգնություն ստանալ առաջին իսկ դժվարության դեպքում, որի հետևանքով աշակերտն այլևս առանձնապես ակտիվություն չի դրսևորում խնդրի ինքնուրույն ուղիների որոնման գործում, քանի որ **ցանկացածպահինկարողէստանալպատրաստիարդյունքը:** Երբեմնէլուսուցիչը չի հետաքրքրվում, թե ինչպես է աշակերտը գտել հարցի պատասխանը: Նա սահմանափակվում է արդյունքների ճշտության ստուգումով, ինչը չի բարձրացնում աշակերտի հետաքրքրությունը առաջադրանքի կատարման համար տարբեր ուղիների որոնման գործում:

Ինքնուրույն մտածողությունը գիտնականներն անձի զարգացման հարցում դիտարկում են որպես կարևորագույն բնութագրիչ: Որքան ինքնուրույն է մարդն իր արարքների, որոշումների և գործունեության մեջ, այնքան նա հասուն անհատ է:

Մտածողության ինքնուրույնությանը բնորոշ են հետևյալ կարողությունները.
առանձնացնել գլխավորը,տեսնել ընդհանուր օրինաչափությունը և կատարել ընդհանրացնող եզրահանգումներ,

հետևողական, տրամաբանորեն հիմնավորել իր գործողությունները և վերահսկել դրանք,

գիտելիքները կիրառել անծանոթ պայմաններում՝ հաճախակի բարդացնելով՝ ստեղծագործաբար, ոչ ստանդարտ մոտեցմամբ,

ստանալ արդյունքները առանց օգնության դիմելու:

Աշակերտների ինքնուրույնության մակարդակները.

- **Վերարտադրողական ինքնուրույնություն**. այն դրսևորվում է վարժությունների կատարման ընթացքում, որոնք պահանջում են գիտելիքների պարզ վերարտադրություն, երբ սովորողները, իմանալով կանոնները, իրենց ձեռքի տակ ունենալով պատրաստի նմուշը, ինքնուրույն լուծում են առաջադրանքները: Այս մակարդակն աչքի է ընկնում նրանով, որ եթե առաջադրանքը փոքր–ինչ **չի համապատասխանում տրված նմուշին,** ապա աշակերտը կդժվարանա լուծել այն: Ընդ որում՝ նա հաճախակի հրաժարվում է կատարել առաջադրանքն այն պատճառաբանությամբ, որ այդպիսի առաջադրանքներ դեռևս չի կատարել:
- **Ընտրովի ինքնուրույնություն.** աշակերտը մի շարք կանոններից, դատողությունների օրինակներից, սահմանումներից և այլն կարողանում է ընտրել **մեկը** և կիրառել այն նոր առաջադրանքների ինքնուրույն կատարման գործընթացում: Ինքնուրույնության այս մակարդակում սովորողները կիրառում են մտավոր գործողություններ կատարելու կարողություններ՝ համեմատություն, վերլուծություն, համադրություն և այլն: Վերլուծելով առաջադրանքի պահանջները՝ աշակերտն ընտրում է արդեն ձեռքբերած գիտելիքներից, կարողություններից այն կարևորը, որն անհրաժեշտ է տվյալ առաջադրանքի կատարման համար:
  - **Մասնակի-որոնողական ինքնուրույնություն.** այս մակարդակում աշակերտն առաջադրանքների կատարման ընթացքում կիրառում է առավել ընդհանրական կարողություններ, որոնք ձեռք է բերել այլ առարկաների և այլ թեմաների ուսուցման ընթացքում: Նա կարողանում է կատարել **ինքնավերահսկում** և **ինքնագնահատում,** կարողանում է ինքնուրույն պլանավորել և կազմակերպել իր ինքնուրույն գործունեությունը, սակայն չի դրսևորում ստեղծագործական մոտեցում:
- Ստեղծագործական-հետազոտական գործունեություն այս մակարդակում ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի այն

համապատասխանի յուրաքանչյուր աշակերտի կարողություններին, այսինքն՝ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները պետք է լինեն տարբերակված: Այստեղ ուսուցիչը պետք է իր համար հստակեցնի տարբերակված ինքնուրույն աշխատանքի նպատակը, այն է՝ ապահովել յուրաքանչյուր աշակերտի կատարած աշխատանքի առավել բարձր արդյունավետությունը ինչպես դասի ժամանակ, այնպես էլ տանը: Դրա համար անհրաժեշտ կլինի հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները՝ հիշողության, մտածողության, նախապատրաստվածության մակարդակը և այլն:

Կան տարբերակված մոտեցման հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. **խմբային,**
2. **զույգով աշխատանք,**
3. **անհատական ինքնուրույն աշխատանք:**

Շատ արժեքավոր է հատկապես խմբային տարբերակված մոտեցումը: Խմբերը ձևավորվում են ուսուցչի կողմից սովորողների զարգացման տարբեր մակարդակների հիմքով: Այսինքն՝ ուսուցիչը հաշվի է առնում գիտելիքների մակարդակը կամ՝ կարողությունները և հետաքրքրությունների շրջանակը:

Թույլ աշակերտների խմբի համար կարելի է մշակել առաջադրանքներ, որոնք հնարավորություն են ընձեռում բարձրացնել ակտիվությունը գիտելիքների ընկալման, իմաստավորման և ամրապնդման գործընթացում, զարգացնում են տրամաբանական մտածողությունը, նպաստում են գիտելիքների համակարգմանն ու կատարելագործմանը:

Ուժեղ աշակերտների խմբի համար կարելի է մշակել առաջադրանքներ, որոնք պահանջում են առավել ինքնուրույնություն, մտավոր լարում և ստեղծագործական որոնումներ:

Խմբերը կարող են ձևավորվել նաև հենց իրենց՝ աշակերտների ցանկությունների հիմքով: Այս դեպքում նույն հետաքրքրություններ, աշխատանքի նույն ոճ ունեցող աշակերտներն աշխատում են համատեղ:

Դպրոցներում առավել շատ են կիրառում տարբերակված ինքնուրույն աշխատանքը, որի դեպքում հաշվի են առնվում անհատական առանձնահատկությունները: Անհատականացումն այս դեպքում իրականացվում է գլխավորապես այնպես, որ սովորողներին տրվում են ոչ թե միանման առաջադրանքներ, այլ տարբեր
տարբերակներ:

Տարրական դասարաններում ուսուցչի գլխավոր խնդիրն է ուսումնական գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ դա հնարավոր է սովորողների ինքնուրույն գործունեության ճիշտ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է հինգ հիմնական փուլ.

I. **Կազմակերպչական.** Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է (բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում):

II. **Նախապատրաստական.** այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այլն, Սա ապահովում է աշխատանքի արդյունավետությունը:

III. **Կողմնորոշիչ.** այս փուլի ընթացքում աշակերտը ծանոթանում է առաջադրանքի բովանդակությանը: Ստանալով առաջադրանքը՝ նա ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Բացի դրանից, այս փուլում ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը: Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում են նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, գծապատկերները և այլն: Այս փուլում ձևավորվում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութեր ընտրելու կարողությունը:

IV. **Հիմնական փուլ.** այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

V. **Ամփոփիչ փուլ.** այս փուլի ընթացքում կատարվում է անդրադարձ:

Ուսուցիչը գնահատում է, քննարկում, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը,արդյունքները:

Առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացվում է ևս մեկ կառուցվածքային փուլ՝ **VI (ստուգիչ) փուլ,** որի ընթացքում աշակերտը, կատարելով առաջադրանքը, ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է աշխատանքը և գնահատում այն (ճի՞շտ է կատարել այն, թե՞ ոչ), այսինքն՝ իրականացնում է **ինքնաստուգում** և **ինքնավերահսկում:**

Հետազոտության ընթացքը

Աշակերտների ինքնուրույն աշխատանքը կազմելիս ես ինձ տալիս եմ հետևյալ հարցերը՝

ա. ո՞ր փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանք (տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացում),

բ. ի՞նչ տեսակներ կարելի է ընտրել և կիրառել գիտելիքների ստուգման փուլում:

Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով կիրառում եմ բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ, հրահանգներ: Դրանք նպաստումեն արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները: Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակում եմ նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ առաջադրելը, այդ առաջադրանքների տեսակները նախապես կատարում եմ երեխաների հետ: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, որից հետո երեխաները հնարավորություն են ունենում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Բնականաբար ես ինքս որոշում եմ առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրում
եմ նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, ինչպես նաև հետևում

եմ աշակերտների աշխատանքին: Հարկ եղած դեպքում՝ ցուցաբերում եմ, իհարկե, օգնություն առանձին աշակերտներին:

Ինքնուրույն աշխատանքները կազմելիս հաշվի եմ առնում աշխատանքի դասակարգումն **ըստ հատկանիշի** և կիրառում եմ աշխատանքի համապատասխան **տեսակներ**.

- Օրինակ՝ **ըստ ուսումնական նպատակների---.**այս նպատակով շատ հարմար եմ համարում **դիագնոստիկ թեստը**: Սա նպատակահարմար է կիրառել թեմայի յուրացումն աշակերտների կողմից ստուգելու և ըստ առարկայական չափորոշիչների նրանց առաջադիմությունը ամփոփելու համար: Թեստի հիմնական նպատակը սովորողների գիտելիքները, կարողությունները ու հմտությունները տարբերակելն է և սովորողների պատրաստվածության մակարդակը չափելն ու գնահատելը: Բոլոր առաջադրանքները ունեն որոշակի ուղղվածություն: Թեստը կազմում եմ երեխաների հնարավորություններին համապատասխան**:**

Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կապված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ: Օրինակ՝ հանձնարարում եմ երեխաներին պատրաստել ինքնաշեն գրքեր, «Ես և շրջակա առարկայի» ալբոմներ, զանազան թեմաներով քարտեր և այլն:

Ինքնուրույն առաջադրանքներն ես առաջադրում եմ հետևյալ կերպ.

1 . անհատական քարտերի տեսքով: Քարտերի մեջ ներառում եմ հիմնական առաջադրանքները և օգնող, աջակցող հրահանգները: Թույլ աշակերտները ստանում են առաջադրանքներ՝ օգնության տարրերով, միջին կարողություններով աշակերտները ստանում են հիմնական առաջադրանքները, իսկ ուժեղները՝ այդ առաջադրանքների բարդեցված տեսակները,

2. առաջադրանքներն իրենց պահանջներով գրառում եմ գրատախտակին: Ամբողջ դասարանը աշխատում է գրատախտակին գրված առաջադրանքների շուրջ, իսկ աշակերտների մի մասը ստանում է քարտեր–հուշաթերթիկներ

3. երբեմն **առաջադրանքները տարբերակներով** եմ գրառում գրատախտակին. առաջին տարբերակը ինքնուրույն աշխատանքի հիմնական տարբերակն է, իսկ մյուսներընախատեսվում են թույլ և ուժեղ աշակերտների համար: Դրանք գրվում են

գրատախտակիաջ ու ձախ կողմերում և նշվում են տարբեր գույնի շրջանակներով: Այստեղ շատ կարևոր, որ աշակերտին իրավունք է տրվում ընտրելու տարբերակը:

4. **քարտերի վրա զետեղված առաջադրանքները կարող են լինել նաև համալիր,** այսինքն՝ ունենան միաժամանակ և՛ օգնության, և՛ բարդեցման տարրեր (օրինակ՝ կատարի՛ր առաջադրանքն ըստ նմուշի և կազմի՛ր դրա նման առաջադրանք):

5. **Գրատախտակին գրվում է գրառումը, որը կազմված է որոշակի քանակությամբ մասերից:** Թույլ աշակերտները կատարում են աշխատանքի առաջին և երկրորդ մասերը, ուժեղ աշակերտները՝ երկրորդ և երրորդ մասերը:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով ես անհրաժեշտ եմ համարում մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն գործունեությունն արդյունավետ կընթանա: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին:

Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքի արդյունավետ ընթացքի կարևոր բաղադրիչներից է ուսուցչի կողմից ուսումնական աշխատանքի պլանավորումը, որից առավելապես կախված է ուսումնական պարապմունքների որակը: Ես առաջնորդվում եմ երկու տեսակ պլանավորմամբ.

ա. **հեռանկարային,** որը տեղ է գտնում թեմատիկ պլաններում, որոշվում են համապատասխան գործնական աշխատանքները, էքսկուրսիաները, նախանշվում են գրավոր աշխատանքները և այլն,

բ.**ընթացիկ**, որը մշակվում է առանձին դասերի ընթացքում:

Պլանավորելով ինքնուրույն աշխատանքը՝ անպայման որոշում եմ դրա տեղը դասի կառուցվածքում, ծավալը, աշխատանքի բարդության մակարդակը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ

աշխատանքի կատարման ընթացքում, ինչպես նաև ձև, բովանդակությունը, տրամադրվող ժամաքանակը (15–20 րոպե):

Ինչպես նաև՝ համապատասխան դիդակտիկ նյութերը, հրահանգները, գծապատկերները, բաշխիչ նյութերը, որոնք կնպաստեն ինքնուրույն աշխատանքի արդյունավետ կատարմանը, հնարավոր սխալների կանխմանը, ինքնուրույն աշխատանքի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, ստուգման և ինքնաստուգման միջոցները:

Մինչև վերջին ժամանակներս կրտսեր դպրոցականներին առաջադրվում էին ինքնուրույն աշխատանքներ, որոնք նպատակաուղղված էին արդեն ձեռքբերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդմանն ու կատարելագործմանը: Այս աշխատանքներն աշակերտների առջև դնում են ոչ թե նոր խնդիրներ, այլ անմիջականորեն ուսուցչի ղեկավարությամբ արդեն կատարված աշխատանքների նմանակումներ:
Այստեղ տարբերակում եմ նոր նյութի ուսումնասիրության ընթացքում իմ և աշակերտի գործունեության համապատասխանության հետևյալ տեսակները.

Առաջին. չեմ շարադրում նոր նյութը, այլ ընդամենը կազմակերպում եմ այդ նյութի շուրջ ինքնուրույն աշխատանքը: Սովորողներին առաջադրում եմ հարցեր, առաջադրանքներ տվյալ նյութի շուրջ, այնուհետև ցույց եմ տալիս դրանց կատարման միջոցները, ստուգում եմ,թե ինչպես են կատարել առաջադրանքները և կատարում եմ անհրաժեշտ լրացումներ ու ճշգրտումներ: Այդպիսի դասերն արդյունավետ են ընթանում այն դեպքում, երբ այդ առաջադրանքները կապվում են սովորողների նախկինում ձեռքբերած ճանաչողական և գործնական փորձի հետ, նոր գաղափարները բխում են նախկինում ձեռքբերած ճանաչողական և գործնական կարողություններից և կիրառվում են ինքնուրույն աշխատանքի այնպիսի տեսակներ, որոնք սովորողներին ծանոթ են:

Երկրորդ. նոր նյութի ուսումնասիրությունը սկսվում է նոր նյութի բովանդակության հետ կապված սովորողներին տեղեկատվության հաղորդումով և իրենց հայտնի երևույթների մասին զրույցով: Դա կատարվում է այն դեպքում, երբ այդ ինքնուրույն

աշխատանքին նախորդում են բնության երևույթների դիտարկումները, էքսկուրսիաները, գործնական աշխատանքները, գրքերի, ամսագրերի ընթերցանությունը և այլն: Այս դեպքում էականորեն փոխվում է քո՝ իբրև ուսուցչի գործունեությունը, որովհետև այն չի կարող սահմանափակվել գիտելիքների հաղորդմամբ և դրանց յուրացման ստուգմամբ: Ուսուցիչը կազմակերպում և ուղղորդում է սովորողների ինքնուրույն աշխատանքը, նրանց հաղորդած տեղեկություններում կատարում է անհրաժեշտ լրացումներ և ճշգրտումներ, ընդհանրացնում է ուսումնասիրած նյութը: Ուսումնական նյութի բացատրության և ինքնուրույն աշխատանքի այսպիսի համապատասխանության իմաստն ու նշանակությունն այն է, որ դպրոցականները օգտվում են գիտելիքների ձեռքբերման տարբեր աղբյուրներից, յուրացնում են ուսումնասիրվող երևույթների դիտարկման մեթոդները, վերլուծություններն ու ընդհանրացումները:

Երրորդ. կանգ եմ առնում հիմնական հարցերի վրա, իսկ սովորողները մեծ ծավալով նյութն ինքնուրույն ուսումնասիրում են: Գիտելիքների շարադրման և բացատրության ընթացքում բացահայտում եմ այն էականը և հիմնականը, որը պետք է յուրացվի սովորողների կողմից, և նշում այն հարցերը, որոնք պետք է ուսումնասիրվեն ինքնուրույն:

Չորրորդ. կազմակերպում եմ միայն խթանման փուլը, իսկ սովորողներն իմ ղեկավարությամբ ինքնուրույն ուսումնասիրում են ծրագրային հարցերը: Այսպիսի ինքնուրույն աշխատանքներն հրաշալի են սովորողների մտահորիզոնն ընդլայնելու համար:

Տվյալների մշակում և վերլուծություն

Շարունակելով վերը նշված թեմաները՝ կցանկանայի այս հատվածում մի փոքր խոսել ինքնուրույն ընթերցանության մասին, տնային հանձնարարությունների՝ որպես ինքնուրույն աշխատանք, կարևորության մասին, ինչպես նաև մանկավարժական նոր տեխնոլոգիաների մասին:

Մայրենիի դասընթացում իրենց ուրույն տեղն են գրավում ինքնուրույն ընթերցանության դասաժամերը: Մի կողմից՝ այդ դասաժամերի ընթացքում զարգանում են ընթերցողական հետաքրքրությունները, երեխաների աշխարհայացքը, նրանց գեղագիտական ճաշակը, գեղարվեստական պատկերավորման միջոցների ընկալումը, նրանց երևակայությունը և ստեղծագործական միտքը, մյուս կողմից՝ իրագործվում են ծրագրային, չափորոշչային պահանջները, ձևավորվում են ակտիվ ընթերցողին անհրաժեշտ կարողություններ և հմտություններ: Ինքնուրույն ընթերցանությունը շատ կարևոր է որպես դասաժամ, քանի որ, ըստ իս, միայն այսկերպ կարելի է ինչ որ չափով
«ստիպել» երեխաներին գիրք կարդալ: Այսօր դա բարդ գործընթաց է դարձել կողմնակի զբաղմունքների պատճառով, որոնցից է օրինակ՝ համացանցը: Եթե մեծ տարիքում կարող ես մարմնիդ և ուղեղիդ ստիպել ենթարկվել, ապա որպես երեխա, դա պարզապես անհնար է, հատկապես եթե ծնողի կողմից չկա հսկողություն:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նպատակներն են ծանոթացնել սովորողներին մանկական գրականության նմուշներին, հետաքրքրություն առաջացնել գրքի՝ որպես գիտելիքների աղբյուրի նկատմամբ, զարգացնել գիրք կարդալու ցանկություն և սովորություն, կատարելագործել սովորողների՝ գրքերն ինքնուրույն ընտրելու և ընթերցելու կարողությունները, այսինքն՝ ձևավորել ընթերցողական արդյունավետ գործունեություն, մշակել ընթերցողական մտահորիզոն և դաստիարակել դրական վերաբերմունք գրքի՝ որպես հասարակական արժեքի նկատմամբ:

Իսկ որպեսզի դասերն անցնեն ստեղծագործական մթնոլորտում, և երեխաները

հնարավորություն ունենան դրսևորել իրենց ունակությունները, ցանկալի է, որառաջադրանքները լինեն անսովոր.

- զարգացնեն տրամաբանությունը, հնարամտությունը,կերպարային մտածողությունը,
- ըստ բարդության լինեն տարբեր մակարդակների, ունենան գործնական նշանակություն և միջառարկայական բովանդակություն,
- լինեն հետաքրքրաշարժ իրենց ձևով, բովանդակությամբ կամ լուծման միջոցներով,
- ունենան անսպասելի արդյունք:

Կան ինքնուրույն ընթերցանության դասերի անցկացման մի շարք ոչ ստանդարտ ձևեր, որոնք ես շատ սիրում եմ կիրառել իմ մեթոդների ցանկում.
Օրինակ՝ **դաս–հեքիաթ,** երբ ամբողջ դասասենյակը փոխակերպվում է հեքիաթային աշխարհի, իսկ երեխաները՝ հեքիաթային հերոսների: Դասը կարելի է անցկացնել մեկ կամ մի քանի հեքիաթների բովանդակության շուրջ: Դա կարող է լինել ժողովրդական կամ հեղինակային հեքիաթ: Դասի ընթացքում օգտագործվում են հեքիաթային իրեր, երեխաներին օգնության են հասնում հեքիաթային հերոսները, դասի ընթացքում օգտագործում են «հեքիաթային արտահայտություններ, բառեր»: Այսպիսի դասն իր մեջ կարող է ներառել թատերական ներկայացման տարրեր:

Դաս–ցերեկույթը, որը կարելի է անցկացնել ամբողջ ուսումնական տարվա ընթացքում 1–2 անգամ: Այն կարող է լինել «Հեքիաթների աշխարհում» թեմայի շուրջ, օրինակ: Այսպիսի դասերին կարելի է նաև հյուրեր հրավիրել: Դաս–ցերեկույթը նախապատրաստում են հենց իրենք՝ աշակերտները, դրա բովանդակությունը կազմված է լինում այն նյութերից, որոնք ուսումնասիրել են ինքնուրույն ընթերցանության դասաժամերի ընթացքում, և որոնք հատկապես դուր են եկել աշակերտներին:

Երեխաները նախապես նկարազարդում են ստեղծագործությունները, ընտրում են գրքեր,պատրաստում են ինքնաշեն գրքեր, կերպարվեստի և տեխնոլոգիայի դասերին կատարում են ստեղծագործական աշխատանքներ՝ դաս–ցերեկույթում ընդգրկված նյութերի բովանդակության վերաբերյալ: Նրանք վերհիշում են թեմային համապատասխանհանելուկներ, հաշվելուկներ, շուտասելուկներ,

բանաստեղծություններ, ինչպես նաև հանդես են գալիս դերային խաղով: Այստեղ ես շատեմ սիրում կազմակերպել գրքերի շնորհանդես: Երեխաներն ընտրում են գիրքը, պատրաստում են հաղորդում դրա վերաբերյալ. ինչո՞ւ է այդպես վերնագրված, ո՞վ է հեղինակը, ովքե՞ր են հերոսները և այլն:

Շատ հետաքրքիր է անցնում «Լավագույն ընթերցող» մրցույթը: Երբ ես ցույց եմ տալիս որևէ գրքից նկարազարդում, իսկ աշակերտները կռահում են գրքի վերնագիրը, ստեղծագործության վերնագիրը, թվարկում են հերոսներին և այլն:
Մեկ այլ ոչ ստանդարտ ձև է՝ **դաս-խաչբառը**, **դաս-հանելուկը** և շատ այլ ձևեր, որոնք հետաքրքիր լինելուց բացի, նաև զվարճալի են, ինչը կարևոր է երեխայի առօրյան թեթևությամբ լցնելու համար:

Վերջերս, կրթական գործընթացում կարևոր նշանակություն է ստացել տնային հանձնարարությունների խնդիրը: Չնայած որ խնդիրը միշտ էլ եղել է: Այդուամենայնիվ, հարցերն են առաջանում, թե ինչու աշակերտները չեն անում իրենց տնային հանձնարարությունները, ինչ հանձնարարել, ինչպես հանձնարարել, ինչ նպատակով, արդյոք պետք է բոլորին նույնը հանձնարարել..Դպրոցական գործընթացում օգտագործում են ինչպես դասարանային աշխատանքի դեպքում, այնպես էլ տնային հանձնարարությունների տարբեր ձևեր՝ անհատական, խմբային, ստեղծագործական, մեկը ամբողջ դասարանի համար, տարբերակված:

Անհատական տնային հանձնարարությունները տրվում են դասարանի առանձին աշակերտների: Այս դեպքում հեշտ է ստուգել կոնկրետ աշակերտի յուրացման աստիճանը:

Խմբային տնային հանձնարարությունները տրվում են տարբեր խմբերի, որոնք կատարում են ամբողջ դասարանի հանձնարարությանմի մասը: Այսպիսի աշխատանքը հանձնարարվում է նախապես և նախապատրաստում է սովորողներին հաջորդ դասին:

Իսկ **ստեղծագործական տնային** հանձնարարությունները տրվում են մի քանի օր առաջ, որոնք բացահայտում են երեխայի առանձնահատկությունները և թաքնված ընդունակությունները: Շատ կարևոր է առաջադրել յուրահատուկ

հանձնարարություններ, պրոբլեմային իրավիճակներ, որոնք ստիպում են ինքնուրույն գտնել հարցի պատասխանը:

Ամբողջ դասարանի համար նույն տնային հանձնարարությունները տրվում են ամբողջ դասարանի համար, որը ամենատարածված տեսակն է: Այսպիսի աշխատանքները չեն բերում սովորողների ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը, բայց ձևավորում են հմտություններ և կարողություններ:

Տարբերակված տնային հանձնարարությունները տրվում են տարբեր ընդունակություններով սովորողների համար ըստ բարդության: Սա նաև յուրօրինակ անհատական աշխատանք է:

Տնային աշխատանքն աշակերտի ծավալած ուսումնական գործունեությունն է, որը նա կատարում է ինքնուրույն: Այսինքն՝ տնային աշխատանքի կարևոր խնդիրներից մեկն աշակերտի ինքնուրույնության ձևավորումն է, որը մեծապես նպաստում է նրա՝ ուսումնաճանաչողական գործունեություն ծավալելու կարողության զարգացմանը:

Կարծում եմ, որ երեխաների դասապատրաստման գործընթացում մեծ է նաև ծնողների դերը, նրանք պետք է զարգացնեն և ամրապնդեն իրենց երեխաների ինքնուրույնությունը և պատասխանատվության զգացումը: Ծնողները պետք է ստեղծեն անկյուն և ապահովեն բոլոր պայմաններով դասապատրաստումն արդյունավետ դարձնելու համար: Որովհետև «մի ճյուղով կրակը կմարի», և միայն ուսուցչի ջանքերը, ցավոք, բավարար չեն լինի այստեղ:

Ամփոփում

Ամփոփելով աշխատանքս՝ կցանկանայի շեշտել, որ Աստված մարդուն ազատ կամք է տվել,և ամեն ինչի հիմքում ազատության գաղափարն է ընկած: Մարդուն պետք է պարզապես վստահել և հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղին, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու: Պարտադիր ուսուցումն անվստահության միտում է պարունակում իր մեջ սովորողի հանդեպ, ինչը մարդուն զրկում է իր ամենացանկալի որակից՝ ինքնուրույնությունից,ինչպես և աշխարհի հանդեպ ունեցած կենդանի և ակտիվ հետաքրքրությունից:

Լինի դա Պյութագորասի թեորեմը, էքսպրեսիոնիստական բանաստեղծություններ կամ Շեքսպիրից անգլերեն ընթերցանություն, թե կերպարվեստ, երգ կամ այլ առարկա՝ շատ ու շատ սովորողների համար դրանք անիմաստ ու տաղտկալի են թվում. դպրոցական դասերը լի են թեմաներով, որոնցով ոչ բոլոր աշակերտները կարող են խանդավառվել: Հաճախ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ երեխաներին և դեռահասներին պակասում են կոնկրետ ամենօրյա հողումներ կամ դրդապատճառներ: Ինչու՞ սովորել բանաձևեր, գրել էսսեներ կամ հարստացնել բառապաշարը:Պատասխանն հիարկե,ակնհայտ է՝քանի որ այս բոլորը կարևոր են ոչ միայն դպրոցում,այլ նաև՝կյանքում: Այս ամենը դեռ մանուկ հասակից պատրաստում է մարդուն հետագա կյանքի համար: Եթե ծնողները կամ ուսուցիչները ցանկանում են երեխաներին և երիտասարդներին ոգևորել դպրոցում կամ տանը և փորձում են ստիպել սովորել, երբեք չպետք է մոռանան իրականության հետ եղած անմիջական կապի մասին: Նույնիսկ ամենամեծ «չսովորողը» կարող է բավականություն ստանալ իր՝ երբեմնի չսիրված առարկայից, եթե նա հասկանա,թե ինչու է պետք այս կամ այն բանը սովորել, և ինչ նպատակ է այն հետապնդում:

Այսպիսով, ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները պետք է նպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Գրականության ցանկ

Աննա Պետրոսյան. տնային աշխատանքը որպես կրտսեր դպրոցականի ինքնուրույնուսումնական գործունեության արդյունավետ հնար

Շավարշյան Ա. Հայ մանկավարժներ, հ. 1.2., Եր., 1958-1961

Ն. Հարությունյան Պետրոսյան Հ.Հ. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ Երևան ,2008թ

, Առաքել Բահաթրյան, Եր., 1992

Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխչյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2011թ.

Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների մասին, ՄԱՍ 1, Ե.,, «Զանգակ», 2013թ.:

Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.

Մովսիսյան Ա.: Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժական մտքիպատմություն: Երևան, 1958

5. История педагогики и образования. От зарождения воспитания в первобытном обществе до конца XX в. [Текст]: учеб. пособие / Под ред. А.И. Пискунов. - 2-е изд., испр. идоп. - М. : Сфера, 2005. – 512 6.

Համացանց

7. Латышина, Д.И. История педагогики. История образования и педагогической мысли [Текст]: учеб. пособие. - М., 2002. - 603 с.

8. Попов, В.А. История педагогики и образования [Текст]: учеб. пособие для студентов вузов ред. В. А. Сластенин. - М.: Академия, 2010. - 203с.